

ՐԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարին	համար
արեկան	12 ֆր.
վեցամսեայ	7 "
Արսասահմանի	
համար արեկան	15 ֆր.
վեցամսեայ	8 "
Անկրկայի	համար
արեկան	3 ռ.
վեցամսեայ	1.50 "

Եստուցման տղր արտիկ ետիկ համար 40 սանթիմ իսկ վերջին ետիկ համար 20 սանթիմ է: Իրեֆիկ աւելի սնկաւնեւո համար 20 0/0 զեղը կրւայ:

Վառնայի համար ան ֆ 40 սանթիմ է

ՇԱՐՄԻՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՅԻՆ. ԲԱՆՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՊՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ԾԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նախակ և ցամ որիկ խմբագրութիւն հասցիկ

Редакция на в "Шеркы" улица

Redaction de Journal "Le Courrier" (Bulgarie)

Պուշկարին համար ան ֆ

15 ՍԱՆԹԻՄ Արսասահմանի համար ան ֆ

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւն և չնկ տրուի

ՇԱՐՄԻՆԻ ՐԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՐ ԵՒ ԿԱՆԿԻԿ ՎՃԱՐԷ

Ս. ԳՍՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒՂԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇ. ԽՆԻՈՐԸԱԼ ՍՕՅԻԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱ. ԿԱՅԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՍՍԵՐՈՒՆ.

Տոմսակ գնել փոփոքողները կրնան իրեն դիմել:

Ձար-Պօրիս փողոց Վառնա

Café Promenade Vienne

Այս շքեղ ս. ճարանը կը գըտնուի Վիէննա քաղաքի քաղաքի վրայ. կըստանայ զանազան հայերէն թերթեր: Առ հասարակ բոլոր հայ կամ արեւելեցի վաճառականները այս տեղ կը յաճախեն: Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս ուր պիտի գտնեն իրենց յարմար գիրքերը և անհրաժեշտ տեղեկութիւնները:

ԴԱՃՆԱԿՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Լեւոն Մեղիֆով Դաճնակցութեան հրատարակող

Եղաւ այն, ինչ որ սպասուում էր: Անցեալ օր Դաճնակցութեան եւրոպայի ներկայացուցիչ պրօպագանդիստ Լօրիսը յարաբերութիւնները բոլորովին խզելով Արեւմ. Բիւրօյի հետ իր պաշտօնից և բոլորովին հրաժարելով մեկնեց զէպի Պետերբուրգ:

Յարաբերութիւնները ներկայացուցիչ և բիւրօյի միջև իրապէս վաղուց խզուած էին և պաշտօնական հաղորդակցութիւնը ամիսներ ընթացքում տեղի էր ունենում երկու օտարական համակրներին միջոցով, որին Լօրիսը գիտնում էր ի սէր գործի և յուսով թէ բիւրօն վերջապէս խելքի գալով ետ կը կանգնի իր գոռոզ վարմունքից. սակայն վերջին օրերս այլևս աւելորդ համարեց հանդուրժել այդ անտանելի կացութեան կոմէտին:

Հարունակել վարագոյրի տակ, ինչպէս սովոր են մեր շատ դաշնակցական գործիչները, ու հրաժարական աւելու ազատ ասպարէզ տեցրել բոլորական ձրակեր թիկնածունքին որոնք վաղուց ի վեր Լօրիսի տակը փորձ էին այդ պաշտօնը ձեռք բերելու համար:

Մեր յարգելի ընկեր իր հրաժարականը տալով պ. Բիւրօյի միջոցով աւելորդ չը համարեց զըրաւոր կերպով հաղորդել որ ինքը «Պրօ Արմենիայ» միջոցով իր հրաժարականի մասին չէ յատարարում միայն այն պատճառով, որ չէ ուզում պղտորել մեր եւրոպայի բարեկամներին մտքերը և սրտերը:

Աւելորդ չեմ համարում դաշնակցական ընկերներին և հայ հասարակութեան բաց ստրել որ Լօրիսը իր ամբողջ գործունէութեան ընթացքին, միայն անցեալ երկու տարին իր ապրուստի համար գրած է ընդունել Դաճնակցութեան կասսայից, իսկ առաջները մանաւանդ կովկասում նրա անձնական գրածից, սեպտեմբեր և տնից օգտվել են բազմաթիւ ձրակեր դաշնակցական գործիչներ, ու փառաւորապէս շահագործել խեղճի թէ վարկը և ի՞նչ գրպանը:

Անցեալ ընդհանուր ժողովին պատգամաւորները միաձայն խորին շնորհակալութիւն յայտնեցին մեր ազդեցիկ և անշահասէր ընկերջը և նոյնպէս միաձայն ընտրեցին նաեւ բիւրօյի անգամ առանց ու է ուղարկութիւն դարձնելու զանազան ոտնձգութիւններին: Սակայն Լօրիսը բարեկամներին խորհրդով անդրադառնալով հրաժարվեց այդ պաշտօնից չուզելով ընկերակցի այնպիսի մարդոց որոնց սիստեմը կարող էր վարկաբեկել և իր անկեղծ գործիչի վարկը, ու չընայելով ընդհ. ժողովի պնդումներին՝ նա ետ շառաւ իր հրաժարականը և մնաց միայն ընդհանուր ժողովի կողմից ընտրված եւրոպայի պլօպակցի:

Ներկայացուցիչ:

Լօրիսը ընդհանուր ժողովում ընդդիմադիր կուսակցութեան մէջն էր... որոշ և յստակ կերպով և այդ եղաւ պատճառ որ ժողովից անմիջապէս յետոյ Արեւմտեան բիւրօն սկսեց Լօրիսի տակը փորել: Բիւրօյի անգամները մէկը՝ մի խմպի գրագէտ, իր սրտաբացութեան վայրկեաններում թոյլ է տուել Լօրիսին յայտնելու «մենք արդէն մըտածում ենք մի կերպ ձեզ չեզոքացնելու... նոյն բանը կրկնել է և Բիւրօյի Բօտ որպէս զի Լօրիսի ազդեցութիւնը կտրվի... Այդ գրագէտը Լօրիսի պաշտօնի նարեւոր թեկնածուներից մին է և այդ պաշտօնը իրեն ժառանգական է համարում, որովհետեւ պարունի աւելով, Բիւրօստափորը աւել է եղել, որ գրագէտը իր պլտիկ եզրային է և ժառանգրապակցորոնացման մէջ ժառանգականութիւն: Արդեօք Բիւրօստափորը այդպիսի բան աւել է:

Մի խօսքով Լօրիսը դաշնակցութեան պալատական ինտրիգներին զգուշ է հեռանում: Բարեբախտութիւնը նրանումն է որ նա փառաւոր ոտնձիկով գրաւելու է այնպիսի մի գիրք որ կրկին կարող է հայ ժողովրդին օգտակար լինել. նա այդ որոշումով և իզնով հեռացաւ Պարիզից և ետ հաւատում եմ:

Ի գիտութիւն ընկերների հաղորդում եմ որ Լօրիսը իր հրաժարականի հետ միասին մի ընդարձակ տեղեկագիր է պատրաստել Արեւմտեան բիւրօյին զրկելու ընդհանուր ժողովին ներկայացնելու համար, որի մէջ բացատրված է նաև բիւրօյի բընած գիրքը:

Գանի որ խօսքս Լօրիսի մասին է, աւելորդ չեմ համարում այստեղ յիշել և մի լիրբ և հիւանդարարածի վարմունքը հանդէպ այդ անշահասէր գործիչի: Այդ լիրբ հիւանդը Վառնայի ծանօթ

խնուկ մակարա Տիգրան էլմասեանն է, որի խնթութիւնը իր գերադրական աստիճանին է հասել. այդ մտեղը Լօրիսին, Չեքազի միջազգայի առիթու մի վիճարարական նամակ գրելով ամենաանպատկառօրէն վիրաւորում է և հայ ցեղին, անպատկառ լըպիրչ հայհոյանքներ ուղղելով մեր ցեղի լաւագոյն հիմնարկութիւններին և անձերին: Լօրիսին ուղղած այդ նամակից աւելորդ չեմ համարում քաղել հետեւեալ տողերը:

«Պորոն,
«Դուք անձ մըն էք որ ըլլալ իարիզ, ըլլալ եւրոպայի ուրիշ քաղաքներու մէջ ինքզինքնիզ կը ներկայացունէք եւրոպացիներու առջև իրբը հայոց ներկայացուցիչը:
«Ոչ ոք գիտէ թէ ներքնապէս ձեզի այս պաշտօնը ո՞ր կէ տըրւած կը համարիք: Արդեօք էլ միաժամի զառամեալ կախարդապետէ՞ն զոր հայ ժողովուրդին ամենաթանձր անբանութիւնը վեհափառ կաթողիկոս անունով կը յորջորջէ ու միապետի կարգը կը դասէ: Թէ սրիկաներու, խաչագողներու, մարգասպաններու այն անանուն բազմաթիւ կոյրերէն, որոնք վերջին տասնեակ մը տարիներու մէջ այնպիսի կան կուսակցութիւն անունով հայ ժողովրդին մէջ տարածուած են, միակ նպատակ ունենալով գրամ շորթել անկէ շահագործելով անոր տգիտութիւնը որ չափ չունի ու ներշնչելով անոր կարգ մը հիւանդոտ երգեր, քաղաքային անիրականալի ծրագիրներո՞ւ:
Այս տողերից յետոյ Վառնայի խնթը մի շարք յիմարութիւններ է դուրս տալիս Լօրիսին հըրաւիրելով իր դասախօսութեանը որի նիւթը պիտի լինի Չեքազի միջազգայը և պահանջում որ Լօրիսը գնայ բացատրութիւններ տալ:
Էլմասեանի նամակը ինձ յիշեցրեց ուս անմահ գրագէտ Գրգուրի «խնթի յիշատակարար»

նրա ուր խենթը ստում է. «Ես Զի- նաստանի կայսր եմ, մարդկային ուզեցը գալիս է կասպիան ծովի կողմից քամու միջոցով, ոչ թէ գտնվում է գլխում»

Էլ մասեանի համար կարելի է ասել որ նրա խելքը զալիս է Բոսֆորից, ազգային խենթանոցի կողմից. և ինչպէս երեւում է, վերջ ի վերջոյ, այդ ազգային խենթանոցն է որ իր ցեղի գլխին լուտանքներ թափող խենթ էլ մասեանի պէտք է ապաստան տայ:

Էլ մասեանը այստեղ իրեն ան- իշխանական է հռչակել և ան- իշխանական դասախօսութիւնն է կարգում:

Պարիզ 23 յունվար

ՀԱՅԱՆՊԱՍՏ ԶԱՐԺՈՒՆԵՐ

Յրանքո-Հայկական յանձնախմբին կողմէ նախագահ Ռուզիկի ղեկավարած նամակին կարեւոր մասերը մեր ըն- թերցողներուն կը ներկայացնենք ստորեւ: Սոյն թուին բանասիրականի բաժնին մէջ ալ իշխան Սպարապետի պատասխանը տպուած պիտի գտնեն ընթերցողները:

Անտարակոյս դուք ալ մեզի շփ խորակս զգացումը ըլլալու էք հայ ժողովրդին եղբրական վիճակով, ժ- ղովրդի մը՝ որ միեւնոյն ծագումն ունի ինչ որ մերը, և որ հնագոյն դարերէ սկսեալ, քաղաքակրթութեան զարգացման մէջ կարեւոր դեր մը կատարած է:

Այդ ժողովուրդը այսօր յուսահա- տութեան մատուած է և զայն շքր- ջապատող միջոցման բարբարոս ցեղերը իրենց անպատիժ բռնութիւն:

ԹՈՒՐԿԻՈՅ ՎԵՐԱՄՆՈՒԹԻՒՆԸ

Այս վերնագրի տակ «Մաթէն» հրատարակած է իշխան Սպարապետի նի ընդարձակ մէկ նամակը, ի պա- տասխան Պէտրոսի Ռուզիկի ուղ- ղած հանրագրութեան նկատի ունե- նալով գրուածքին շահեկանութիւնը ստորեւ թարգմանաբար կարտառը- պենք կարեւոր մասերը:

«Մաթէն» կաւելցնէ թէ այն նա- մակը շահեկան է անոր համար մա- նաւանդ որ, Սպարապետին իշխանը Ապարիլ Համիտի մահէն ետքը, պե- տական խորհուրդներուն մէջ կարե-ւոր տեղ մը պիտի գրաւէ:

Պարոն Պերթո, Բարիզ

Երախտագրական անկեղծ զգացումով էր որ կարգացի խիստ մարդասիրական նամակը զոր ուղ- ղած էք նախագահ Ռուզիկի ի նը- պաստ հայերուն:

Անմօթ է Եւրոպայի համար, ու թոյլ տուէք որ ըսեմ, նաև Ամերի- կայի համար—կը գրէք—ձգել որ յա- բատեիք անիշխանութեան ու ոճիր- ներու այս վիճակը որուն անվերջ ապականութիւնները չի մոռնանք թէ

ներով և վարագոթի թիւններով կը սպառնան բնաջինջ ընել զայն, ու այդ նպատակը կը հետապնդեն ա- սը տարիէ ի վեր:

«Այս դժբաղդ գաւառները բնա- կող կամ այդ կողմերէն անցնող եւ- ռոպացի կամ ամերիկացի ճամբորդ- ներու վկայութիւնները, ինչպէս նաև հոն զրկուած շիւանագիտական գործակալներու պաշտօնական տե- ղեկագիրները կը հաստատեն այս ի- ռողութիւնը ամենաճշգրիտ ու սըր տաճարիկ մանրամասնութիւններ տա- լով: Այսօր հայ ժողովրդին համար ոչ կեանքի, ոչ ինչքի, ոչ մարդու- կնոջ կամ տղու պատուի ապահովու- թիւն կայ. որովհետեւ Ասիան ա-ւերող կազմակերպուած աւազակներ յաւիտենապէս կողոպտու, ասեան գում ու ջարդ կը սպառնան անոր: Աստուք են, պարոն նախագահ, ձեզի դիմելուս պատճառները: Խոյ դիմում որ, իբր հեղինակուոր արտա- յայտելը քաղաքակրթ ազգերու կարծիքին, միջամտէք ձեր յարմար գաղտնի ձեռքով ու միջոցներով, այն կառավարութեանց քով որոց եր- կիրներուն մէջ խոզմութեանց այս տեսարանները տեղի կունենան:

Կը համարձակինք յուսալ թէ ձեր համակրանքի ձայնը բնորոշութի- թիւնը պիտի գտնէ նաև Ռուսաց Զարէն, որ այնքան բուռն կերպով հռչակեց իր մարդասիրական դիտա-ւորութիւնները և կամեցաւ միջազ- գային համաձայնութիւններով նուի- րագործել գտնելու կը խնդրինք ձեռք եւրոպական տէրութեանց համաձայ- նութիւնը ստանալ, որպէսզի օսման- եան կայսրութեան հպատակները վայելեն հանրային անդորրութեան ու կարգի այն վիճակը որուն բացա- կայութիւնը այնքան աղէտներ ըն- րաւ այս կայսրութեան զիտուն և և կը սոյառնայ անոր ամբողջական բնաջինջութիւնը յայտնելով վերջ ի վեր- ջոյս:

Ծ. Խ — Այս նամակը մտորագրած են 400 է աւելի երեւելի անուններ եւրոպական ամէն ազգութիւններէ:

սկսած են մինչեւ մեր հայրենակից ներուն ալ հասնիլ:

Թոյլ տուէք որ իմ կողմէս, ես ալ տւելցնեմ թէ աւելի գերազօր դեռ ուրիշ պատճառ մըն ալ կայ ի նպատ- ձեր բողոքին: Եւրոպան, կամ աւելի ճիշտը, Եւրոպայի մէկ մասը, անիշ- խանութեան ու ոճրի այս վիճակը յարատւելու թուլ տալէ գատ, ուղ- ղակի մասնակցած ալ է անոր, ժո- ղովրդային դժգոհութիւնն ու տե- ղուկան իշխանութեան բացակայու- թիւնը միակ պատճառները չեն այն անիշխանութեան ու յեղօփոխու- թիւններուն որոնք երկար տարիներէ ի վեր կարելին են Եւրոպական թուր- քիոյ մէկ մասը, կարգ մը տէրու- թեանց պայտօնական կամ անպայտօն գործակալները վարպետի ձեռքերով կազմակերպած են այս խառնակու- թիւնները:

Դժբաղդաբար շատ հաստատ ուրիշ ճամբորդութիւն մըն ալ սա է թէ Պոլսոյ կառավարութիւնը (եթէ եր- քէք կարելի է այդ անունը տալ ա- նոր) շատ անգամներ, հայկական ցար- դերու ատեն, կայսրութեան անմի- ջական գրացիներէն համակրութիւն ու քաջայերանք գտած է:

ՆԱՍՏԱ ԵՐԿՐԷՆ

(Շար. Ասխորդ թիւին և Վերջ)

Սյն հայերը որոնք երկար տարիներու բացակայութենէ վերջ կը ցանկան դառնալ իրենց հայրենիքը և սպրիլ իրենց ըն- տանեաց հետ, մասնաւորապէս Ամերիկայէն Պուլկարիայէն, և- գիպասուէն, կուսովարութիւնը ձեռքակալելով կը բանտարկէ, գրամները կտանէ, ինչէ չունի օրական քանի մը անգամ ձեռք կուտէ, կը ոպասէ բանտը, ա- ռանց կարենալու իւր բարեկամ- ներուն նոյն իսկ լուր գրկելու, ահա այսպէս ամեն հայ կասկա- ծելի է, և ամէն ոք կը կասկածի թէ՛ ժամ մը, կամ որ մը վերջ, ինքն ալ ենթակայ կրլլայ այն գործող մարդերու վիճակին, որոնք խոնաւ բանտերու, մոթ զնաւաններու ապականուած ու գարշահոտ միջոցներուն մէջ, ահ- աւելի շարժարանքներ կրելով, ի- ընց մահուան օրհասին կը սպա- սեն:

Մեր, գեղեցիկ, պաշտելի, ան- նման երկիրը, որ շնորհիւ հա- յուն ոչխատաւոր ձեռքին, ապա- գային հանգիստ և երջանիկ կեանք մը պիտի ապահովէր, բոլոր թուրքիոյ հպատակ ազգու- թիւններուն, ներկայիս դժոխա- յին սարսփներու մատնուած է թշուառութիւնը տիրած է բոլոր հայ տուններէն ներս, և երկիրը նպատակաւոր անիշխանութեան մատնուած է, տիրող կտաւու- րութեան կողմէն:

Ներկայիս արեւան գետերը չեն որ մեր երկրին լեռն ու ձորը

ՀՍԵՆՐՈՒՆ ՄՍՍԻՆ, ԵՐ ԽՈՐՀՈՒՆ, ԲՍԵՑ ՏԱՃԻԿՆԵՐՈՒՆ ՄՍՍԻՆ՝ ՈՉ

Թէեւ դիտանալիս թիւնը իր պարտականութեան մէջ թերացաւ, բայց գտնուեցան մեծանուն մարդիկ որոնք կորովի կերպով պաշտպանե- զին քաղաքակրթութեան պայտակա նութիւններն ու իրաւունքները... Սակայն ոչ թուրք ժողովրդին հա- մար, որոնք նոյնպէս իրենց քրիստոն- եայ հայրենակիցներէն նուազ չեն հարստահարուիլ: Ստուգիւ գանա- զանութիւն մը կայ. քրիստոնեանե- իւր ջարդին ատեն, ամբողջին վոյ էր որ յարձակեցուն, իսկ թուրքերը ջարդելու համար միայն ընտրուածնե- իւր վրայ կը յարձակին, որովհե- տեւ մշակ դասակարգը որ թուրք ժողովրդին մեծամասնութիւնը կը կազմէ, ներկայ ոչ ժիմի մեծ մտա- հոգութիւն մը չի պատճառեր: Գիւ- ղացիները աներեւակայնի աղքատու- թեան մատնուած են գիւղուորացու- թեանց պատճառաւ, որուն ամբողջ րեռը իրենց վրայ կը ծանրանայ: Գիւղացիին օճախը անվերջ տիրու- թիւնով մը պատած է, չորք մշա- կողը կրնէ, որ ոչ հայր ունի, ոչ եղբայր, և ոչ ամուսին, որոնք մեռ- նելու վրայ կամ արդէն մեռած են

պիտի կարմրուեն և ոչ ալ- թնգանթներու գոռում գոչումը որոյ զոհերուն ազգկուոր ձայնը, թերեւս հայասէր (՝) Եւրոպային կարեկցութիւնը շարժէ. մեր գլխուն վերեւ կեցած իսլամի զաւամ «Օղլանը» իւր հայա- ջինջ ծրագիրը առաջ կը տա- նի, այն աստիճան զազիր ու նենք գոյներով, որը մարդկային ու գողտանային, ամենասուր բար- քելով վարակուած թուրքի մը՝ Համիտի մտածման յատուկ է:

Կովկասէն գալովոյ «մուհա- ճիրները» կը հաստատուին այն կեդրոնները ուր հայերը մեծա- մասնութիւն կը կազմեն. այս կատարած շուններու արարքները շփ և սահման չունին. եթէ մի- ջոց ունենամ ու չը ձերբակալ- ուիմ յաջորդով պիտի գրեմ Զեզ կարգ մը զէպքերու մասին, որոնք պատահեցան մի քանի գա-ւառներու մէջ, այս վայրերն ի միասին մանկերուն կողմէն:

Այս քանի օրերը կուսովարու- թիւնը մասնաւոր պայտօնեաներ հանած է, որոնք բոլոր հայերուն ստորագրել կուտան, պաշտօնա- կան թուղթ ըր, որը ուղղած է Սուլթանին: Պարունակութիւնը այն է որ հայերը իրենց գոհու- նակութիւնը կը յայտնեն կու- սովարութեան ոչն հոգատարու- թեան մասին զոր ցոյց կուտայ հայերուն հանգէպ: Բոլորն ալ ստորագրած են, չէ կարելի որ մէկը ընդիմանայ, եթէ չուզես ստորագրել կը ձեռքեն, կը բան- տարկեն, ուզես չուզես պիտի ստորագրես: Ահա այսպէս մենք կուպրիք կատարեալ դժոխքի մը մէջ:

Մակեդոնիոյ Սրբիոյ կամ ուրիշ տեղերու կոտորածներու մէջ: Ու երբ հարկահաւաքը կամ աւելի ճիշտ, ոստիկանը զայ սուրբի տեղ կը յա- փըլաւակ խեղճին միակ եզր, քանի ի մը խոհանոցի անթիւններ, և մինչեւ իսկ ողորմելի անկողնի մը կապաւ- ները:

ԹՈՒՐԿԻՈՅ ՄԷՋ ԳԻՒԼԱՑԻՆ ԿՈՐ- ԴՆԱՆՆԵՆ ԵՆԻԹԱՊԵՏՍ ԻՍԿ ԷՆԹԵԼԻԿԷՆՏԸ ՏԱՐԱԳԻՐ Է

Ուրիշ տեսարան երբեմն գիշերներ կըլլան որ ամբողջ Պոլսը շարժման մէջ կրլլայ: Երազգի բարձունքէն մինչեւ Պէշիքթաշի ծովափը լսելի կըլլայ զինուորական քայլու տա- րորինակ երթելիկի մը ապուկը: Կեռուանց սա տեսակ բայագանչու- թիւններ լուարը կը պատեն:

Անկցի՛ բունաւորը. անկցի՛ ոճ- րագործը: Աստուք թուրք ապաստ- կաններ կամ ուսանողներ են որոնք աքսորի ճամբան ձեռք առած են, ա- մեն տեսակ շարժարաններու են- թարկուելէ և ապօրէն դատարանի մը գատաւճիւնը ընդունելէ ետքը: Ու դեռ խեղճերը չեն գիտեր թէ զէպի աքսոր կառաջնորդեն զիրենք. թէ զկպի մահ, ձեռքերին շղթայուած,

Երանի՛ Զեզի որ ազատ երկրի մէջ կը գտնուիք : Ընդունեցէք մեր յարգանքները : Զերդ՝ ՍԳԱՒՈՐ

ՎԱՌՆԱՅԻ ՀԱՅԿ. ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

Շուրջ տարի ու կէս առաջ իտեմք մը վերակազմեայ Հնչակեան եւ ոչ կուսակցական անհատներ, խտրական ոգիէ զերծ ու կուսակցական սգգեցողութիւնէ ազատ ընթերցարան մը հաստատելու առաջադրութեամբ ընկերութիւն մը կազմելով, իսկոյն նպատակի իրագործման կաշխատին հանրային օժանդակութեան գիծերով, ու կը յաջողին հիմք դնել ներկայ Հայկ. ընթերցարանի որ հակառակ հիմնադիր անդամներէ ոմանց յետոյ ցայց տուած չկամութեան, իր վարչական մարմինի եռանդուն ու անձանձիր աշխատութեան շնորհիւ կը հասնի նախանձելի բարեօք վիճակի մը :

Այս է բացարձակ ճշմարտութիւնը Հայկ. ընթերցարանի հաստատման, այս է ամբողջ իրողութիւնը, քայց այս չէ միայն մեր ըսելիքը :

Անցնինք : Հայկական ընթերցարանի գոյութեան միակ իրաւունքը՝ իր ոչ-կուսակցական հանգամանքը՝ վերակազմեայ հնչակեաններէ, մասնա որապէս անոնցմէ մէկէն, կուսակցական սքողուած ունձգութիւններով կուզուի եղծանել, աւրել ու արշաղել :

Այս նպատակաւ ընկերութեան կազմութենէն քանի մը ամիս վերջ գումարուած ընդհ. ժողովէ մը, չեմ գիտեր ինչպէս, ընկերութեան լուծման պարագային հիմնադիրները անոր գոյքերուն տիրանալու ու վարչական ժողովի գործառնութեանց վրայ շարունակ հսկելու անօրինակ որոշում մը կը խլուի, այս կերպով, հիմնադիրներու վերակազմեայ մեծամասնութեան միջոցաւ, ընթերցարանը հնչակեան թեւակութեան

տակ առնելու համար : Սակայն շատ չի տեւեր այս նոր. ընտիր վարչութիւնը այսպիսի նուաւտացուցիչ պայմաններով — ինչպէս պիտի ընէր իր արժանապատուութեան նախանձախնդիր ամեն մարմին — պաշտօնավարել չուզելով հաւաքաբար կը հրաժարի :

Հնչակեան պարոնները տեսնելով որ դեռ ընկերութեան նախնական քայլերուն գիմակաթափումին սուղի պիտի նստի իրենց եւ ընթերցարանի 8-900 Քր. պարտքը ժողովրդային ուժելու հեռանալով իրենց ուսին վրայ պիտի ծանրանայ, տեղի կուտան ու վարչութիւնը կը սկսի գործի :

Ճարուան մը շրջանէ վերջ, երբ պայմանները բարորոշին կը փոխուին վարչական մարմինի եռանդուն ու յարատեւ ջանքերու շնորհիւ ընթերցարանը յարատեւ դէպ յառաջ իր կողման բարձունքը կընթանայ ու վարչութեան պաշտօնավարութիւնը լրացած ատեն, պարագեքը վճարուելէ զատ քանի մը հարիւր Քր. պատրաստ զրամ կը գտնուի, ահա հիմնադիրներու խնդիր մըն է կը նետուի նորէն մէջ աեղ :

Ընթերցարանի հիմնադիրներէ մին, որ տարիէ մը ի վեր զողորմ էր անգամակցութենէ գործադիր ժողովի համարաւուութիւնը լսելու ու նոր վարչութեան ընտրութեան ձեռնարկելու համար գումարուած ընդհ. ժողովին վազեց եկաւ, ու զիտուելու պահուն թէ ընկերութենէ դուրս անհատներ իրաւունք չունին ժողովին մասնակցելու, ելաւ յայտարարեց թէ հիմնադիրներ, անգամավճար տան չը տան, անկապտելի իրաւունքը կը վայելն ընկերութեան գործերուն միջամուխ ըլլալու :

Հիմնադիրներու իրաւասութեան անտեղի, անօրինակ ու գերազանցութիւն աշխարհային այս պահանջումներու միանգամ ընդ միշտ վերջ տալու ու կուսակցական կեղծիքի ակամայ ծառաները չըլլալու մտահոգութեամբ, ոչ կուսակցական անգամներ պահանջ

չեցին հիմնադիրներու ու եւ է քացառիկ իրաւունք չը ճանչնալ ու ընթերցարանի քայքայման պարագային գոյքերը յանձնել տեղույս ազգ. վարժարանի :

Ի՞նչու ու զէմ երկար վիճաբանութիւններէ յետոյ, որոշ եզրակացութեան մը յանգելու անկարելի ըլլալով, ժողովը ցրուեցաւ, յուզուած հարցը վերջնականապէս լուծելու համար կրկին ընդհանուր ժողով գումարելու որոշուով :

Այս քանի մը շարքի վերջ ժողովը գումարուեցաւ : Վերակազմեայները գործի վրայ էին. ընկերութենէն հեռացած իրենց ընկերներու բաժնեկիները վճարելով իրենց հետ ժողովի բերին, ձայներու մեծամասնութիւնը շահելու համար :

Այսպէս՝ հակառակ ամենաբոնորոշներու, ընթերցարանին 72 անգամներէ 29 զէմ 38 ձայնով կորուչուի գոյքերը ընկերութեան քայքայման պարագային փոխան ազգ. վարժարանի, Հնչակեան կուսակցութեան սեփականացնել : Ասոր վրայ նորնտիր վարչութեան 7 անգամներէն 5ը յայտարարելով թէ ստեղծուած նոր պայմաններով պաշտօնավարել իրենց նախատինքն ու անպատուութիւն կը համարեն, իրենց հրաժարականը տուին :

Հոս միջանկեալ երկու խօսք :

Այս ամիս տեղույս վեր. հնչակեան մեծամասնութեան անորակելի արարքը ձողկած ատեն, չենք կարող չը ծափել 3 հնչակեան պարոններու — որոնց 2ը ընթերցարանի վարչութեան ալ անգամ էին — անկախ նրկարագիրը, այս պարոնները ամէն կերպով մաքառեցան իրենց ընկերներու անմիտ կուսակցամուտութեան դէմ, որ իրենց պատկանած կուսակցութեան ոչ մէկ օգուտ չը տայէ զատ անոր մասին ոչ նպատաւոր գաղափար տածումին ծառայեց :

Ի՞նչու ուրկէ ո՞ւր այս որոշումը պիտի հարցնէ ընթերցողը : Ես ալ կը ձայնակցիմ իրեն :

Ընթերցարանի հիմնուելէն մինչեւ

հիմայ պատուելու աստիճան պրոպագանդայի յայտարարել ու զայն ցոյց տալ կուսակցական ազդեցութենէ բոլորովին ազատ, իրր ժողովրդային հաստատութիւն, ու այդ անունով ժողովրդի օժանդակութեան գիծելէ յետոյ, ելնել անոր գոյքերուն տէր դարձնել — ո՞ր ատենուան համար ալ ըլլայ այդ — վեր. հնչակեան կուսակցութիւնը, զա կը նշանակէ կասկիզքէն ճշմարտութիւնը ծածկած ու թագուն նպատակներով ճամբայ ելած, կամ թէ հինչեւ հիմայ ընթերցարանին օժանդակող հանրութեան իրաւունքները յափշտակելու ելած են : Թէ ինչպէս պէտք է որակել այս ընթացքը, ատիկա կը ձեռքենք իրողութեանց տեղեակ հանրութեան :

Անգամ մը

ՎԱՅՐԵՆԻՔԸ ՎՏԱՆԳԻ ՄԷՋ ԷՆ...

(Շար. Ասիւրեանց քիւիկ եւ վերջ)

Գիւղացիական եւ գործի միջի այդ շարժումները ժամանակ մեծ չափեր, լայն ծաւալ են ստանում, գրաւում ամբողջ երկիրը... Սպանդանոցի կերպարանք է հանուր կողմաւոր, Հեհաստանը ոտքի վրայ է, Ֆինլանդիան կտրուելու նման, միւս երկիրները — ձայրերը հրդեհի մէջ... և վիտտէն՝ նախարարական խորհուրդը մտածում են զինուորական զիկտատորութեան, ծայրայեղ ճնշումներէ մասին :

Կոմս վիտտէի պատասխանը զէմտ վոնէրի պատգամաւորութեանը պարզում է այն ընթացքը, որը վճռել է բունել հին ըէժիմը :

Ձեմտտվոյի ներկայացուցիչները մի ծանուցագրով դիմում են նախարարապետին եւ առաջարկում. — ժամանակ է գործադրելու լայն պետական մի ծրագիր, որ կարող լինէր վերականգնել Ռուսաստանի կեանքի բնական ընթացքը, ժամանակ է ձեռնարկելու բարեփոխութիւններին :

քանական, քառասունական կամ վաթսուսական հողինոց խումբերով կերթան, շրջապատուած զինուորներէ որոնց սպաններն իսկ ձգտեալ լրտեսներու բանակի մը միջոցաւ հսկողութեան ենթարկուած են : Եթէ բողոք կամ զայրոյթ մը արտայայտես ապտակը կը շողայ երևիդ, Արշալոյսը դեռ չի ծագած, նաւարանին անխատար մակոկներուն մէջ կը փոխադրեն ու երբեմն ալ կրկնայարակ շողենաներու խորը ու այլ եւս ա նոնց մասին խօսուելը չիտ կրնար լսել :

Քառորդ դարէ մը աւելի է որ գիւղերային այս թախծալի առաքումները կը կատարուին, և ոյովհեհաեւ ազատականներու ի՞նչու, հակառակ հալածանքներուն, միշտ կը շատնայ, աքսորականներու թափօրն այ օրէ օր նոյն համեմատութեամբ կաճի :

ԱՆՀՐԱՎԵՇՏ Է ԱՄԲՈՂՁ ԿԱՅՍՐԱՒԻ ԹԻՒՆԸ ԲԵՐԵՆՈՐՈՐԹԵՒՆԸ

Եւրոպայի մերթ ընդ մերթ առաջարկած բարեփոխութիւնները, փոխանակ դարեցնելու զիրար բղկաող սլազան տարրերու ընկերական անհասարակչուութիւնը, այ աւելի շեշտած են զայն : Օսմանեան կայսրութիւնը անցեալին մէջ և այժմ ընկերական ու պատմական անհրաժեշտութիւն մը կը լրացնէ, զոր պէտք է ի նկատի ունենալ խնդիրն լուծուած կարելի ընելու համար : Այս անհրաժեշտութիւնը կը պահանջէ որ անմիջական օրէն իրագործուին ընդհանուր և ոչ թէ մասնակի բարեփոխութիւններ, որովհետեւ բոլոր այն գաւառները ուր, օրինակի համար, հայեր կը բնակին, այս վերջինները փոքրամասնութիւն կը կազմեն առանց քացառութեան : Ինչպէ՞ս ուրեմն կարելի է մտածել անոնց վիճակին բարեփոխման մասին, երբ միւս մեծամասնութեան վիճակը նկատի չառնուիր :

ՀԱՅ ԹԷ ԹԻՒՆԻՔԻ ՄԻԵՒԵՆՈՅՆ ԵՄԱՆՆԵՐՆԵՐԸ ՈՒՆԻՆ

Ասկէ զատ, ինչ ալ ըսեն հայերը, շահու կատարեալ համբարչութիւն


մը կայ անոնց և թուրքերուն միջեւ : Այս երկու տարրերը խաղաղ աշխատաւորներու դաս մը կը կազմեն կարդի ու խաղաղութեան ցանկացող բայց որոնք միեւնոյն վտանգին առջեւ կը գտնուին, այսինքն քիւրտ թափառաչիկ ցեղերու պարբերական հարստահարութիւնները, Առանց հաշուելու համարիչները, որոնք միմիայն քիւրդերէ կազմուած են, չորրորդ գորտարանակը թէ՛ն և միւսերման, բայց ոչ թիւրք տարրերէ բաղկացած է ամենամեծ մասամբ :

Միւսիման և թիւրք անուններու չփոթումը որ կընէ Եւրոպացիին շատ ազէտալի եղած է : Եւրոպան կը մոռնայ թէ միւսիման քիւրտը զանազանութիւն չի դնել թիւրք գիւղին ու հայ գիւղին միջեւ : Միտքս քիւրտ ցեղին վրայ յարձակել չէ : Արիական սերունդէն ըլլալով, հետեւարար աւելի մեծաւոր հայերուն քան թիւրքերուն քիւրտերը նշանակելի խեղացութիւն ու կորով մը ունին : Իրենց վայրագութիւնը իրենց ընկերական պայմաններուն հետեւանքն է : Չայն պէտք է կանոնաւորապէս ստիպենք հաստատաբնակավայր ընտրելու, որով պիտի ջնջած ըլլանք անհամաձայնութեան ու անիրարանութեան զլիւաւոր տարրը :

Բայց ասիկա մասնակի դարման մըն է միայն որ կը ստորագասուի ուրիշի մը, աւելի ընդարձակ ու ընդհանուր, այն է ամբողջ կայսրութեան վարչական ապակեղրոնացումը, որով իւրաքանչիւր դաւառին միացած բընակչութիւնը տեղական վարչական գործերուն վրայ իրական վերահսկողութիւն մը պիտի կարենայ կատարել և կարգն ու խաղաղութիւնը ապահովելու համար հարկ եղած միջոցները ձեռք առնել :

Ուրեմն, Եւրոպա ու Ամերիկա թող որոշեն միջամտել թուրքիոյ գործերուն յանուն մարդկութեան : Անիրաւութիւն ըրած չըլլալու համար, պէտք է միջամտեն ներկայ ըէժիմին բոլոր զոհերուն համար անխտիր : Փոխանակ Սուլթանին ընդունել տալու օտար քոնթրոլ մը, որ ազգային գերիշխանութեան սկզբունքին հակառակ է, պէտք է ուժ տան ներքին քոնթրոլի դրութեան հաստատուելուն :

ՍԱՊԱՀԷՏՏԻՆ



ձեռնած տառ չթողնելու հոկտ. 17ի մանիֆեստը, որովհետեւ ամբողջ մրտաձող Ռուսաստանը, յառաջագէտ Ռուսաստանն է ցանկանում այդ և այդ է փրկութեան միակ ուղին...

Եւ կոմս Վիտտեն, զէմտագոնքի եւ քաղաքների ներկայացուցիչներին պատասխանում է բացասորէն ու աւելացնում, որ «կառավարութիւնը միտք չունի իր ընթացքը փոխելու, այլ վճռել է կարգը վերականգնել բացառիկ եւ արտաքոյ կարգի միջոցներով»:

Այժմ գրութիւնը պարզ է.—ասում է. «Ռուս. Վէդ.» թերթը—քաղաքային եւ զեմտագոնքի գործիչներին չէ կարելի այլեւս մեղադրել. որ նրանք չը կամեցան նեցուկ լինել կառավարութեանը... նրանք հրաւիրեցին կառավարութեան՝ լայն բարենորոգումներ իրականացնել եւ պատրաստակամութիւն ցոյց տալին թիկունք դառնալ, եթէ կառավարութիւնը երկրի այդ պահանջը իրագործելու ձեռնարկի: Սակայն կառավարութիւնը մերժեց այդ ուղիով քայլել. ուղի, որ գծել է հոկտեմբեր 17ի մանիֆեստն—ինքը: կառավարութիւնն ուրեմն յենուում է դարձեալ բիւրոկրատիայի վրայ: Յառաջագէտ տարրերին մնում է կրկնապատել իր ոյժերը եւ կռուի ելնել հին ընթացի մնացորդի հետ... շարքի վրայ, վտանգի մէջ է եւ բուն, արիւնահեղ կոիւր, բուն, իսկական յեղափոխութիւնը առաջնիս է... Փ.

«Արշալոյս»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունի. 28 ին կառավարող Պոլսէն Սօֆիա հասած է Թուրքիոյ Բարիզի գեսպան Միւնիք բաշան: Իր քարտուղար էտհէմ պէյի ընկերակցութեամբ:

Կայարանը՝ զանի գիմաւորելու գաջած է, Ն. Ա. Բ. գազտնի գահլիճին վերատեսուչ Տոպրովիչը, և արքունական կառքով մը, կայարանէն «Պուլկարիա» պանդոկը առաջնորդուած է:

Ամսոյս 29 ին նորին Ա. Բ. երկարատեւ տեսակցութիւն մը ունեցաւ Միւնիք բաշայի հետ:

Ի պատիւ իրեն, այն օրը Սօֆիայի արքունիքին մէջ ժամը 12 1/2 ին ճաշկերոյթ մը տրուած է, որուն բացի իրեն քարտուղար էտհէմ պէյէն, հրաւիրուած են Սօֆիայի տաճկական գործակատար Սաւրք փաշան, նախարարապետ զօրավար Բէքրով, ներքին գործոց նախարար Բէքրով, պատերազմական նախարար Ուվով և իշխանական պալատականներու մէկ մասը:

Ինչ նշանակութիւն ունի արգետօք Միւնիք փաշայի Սօֆիա գալը:

Շատ ալ հեշտ չէ՛ այս մասին բան մը ըսել. Միւնիք բաշան Բարիզ երթալու համար ճամբայ ելած է: Սօֆիայի մէջ եղած ընգունելութեան տեսաչը ենթադրել կուտայ թէ՛ նա իշխանին անձնական հիւրն է որպէս ծա-

նօթ մը, սակայն ինչ որ ալ ըլլայ անպատճառ երկրորդի կարծիք Սուլթանը յանձնարարութիւն մը ըրած ըլլալու է, ըսելու կամ լսելու համար երկրիս իշխանէն:

Միւնիք բաշան օգտուելով իշխանին հնա ունեցած ծանօթութիւնէն, Սուլթանի ստիպումին վրայ յանձնառու եղած ըլլալու է այս հետապետական այցելութեան:

Շատ հաւանական կը թուի թէ Միւնիք բաշան՝ իշխանութեանս պետին հետ խօսած ըլլայ հետեւեալ կետերու վրայ.

1) Թուրքիոյ պատերազմական պատրաստութիւններու և Սօֆիայի մասին պատերազմամիտութեան վրայ շրջած լուրերու մասին

2) Սեւրայ ու պուլկար մաքսային համաձայնութիւնը,

3) Թուրքիոյ հետ եղած մաքսային համաձայնութիւնը:

Առջի կէտի մասին երկուստեք հաւաստած են թէ՛ այդպիսի միտում մը չունին, իսկ մաքսային խնդիրը քիչ օրէն քննուելու է խառն յանձնախմբի մը կողմէ: Գալով սերպ. պուլկարական մաքսային համաձայնութեան, պուլկար կառավարութեան նախարարները փաստերով ապացուցած են Միւնիք բաշային թէ այդ կապակցութիւնը ոչ ներկային և ոչ ալ ապագային մէջ ուղղուած է Թուրքիոյ դէմ, և երբէք զիստելու չէ Թուրքիոյ շահերուն:

Միւնիքը Պուրքէշի ճամբով Բարիզ մեկնած է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսէն՝ Վիեննայի լրագրիչներուն կիմացնեն թէ՛ Մակեդոնիոյ ելեմտական յանձնախումբը, ամենայն փութկոտութեամբ իր գործունէութիւնը առաջ կը տանի: Սելանիկի և Սոֆիոյ կուսակալութիւններու ծախսերը տրդէն նախատեսուած են, հիմայ Պիթոլիոյ նահանգը պիտի որոշուի:

— Թատոս կղզին որպէս ծովային նաւահանգիստ, ինչպէս նաև այս կղզիին մէջ գտնուած հանքերու առանձնաշնորհումը ձեռք ձգելու համար, Գերմանիան Թուրքիոյ վրայ մեծ ճնշում գործ կը գնէ: Անգլիան բողոքած է այս մասին:

— Սմիրնա և Հոտէյտա անուն թրքական շոգենաւերը, Թարպիչոնի և միւս տաճկական նաւահանգիստներու մէջ կովկասցի գաղթականներ բերած են:

Սմիրա շոգենաւին մէջ 800 իսկ Հոտէյտաի մէջ 600 հոգի կան ելիք, ասոնց ամէնքն ալ

առուսահայատակ մահմետականներ են:

«Իւլիիչէր Բրէսլին Պոլսէն կիմացնեն թէ՛ կառավարութիւնը յատակ հրաւիրագրով մը Անսալտս գործարանին տեսուչը Պոլիս հրաւիրած եւ անոր յանձնարարած է երկու յ. ծանաւ, երկու սուլանաւ և շատ մը թնդանօթներ:

— Եէմէնի և նամանաւանգ Սանաի գրութիւնը մեծ անհանդատութիւն կը պատճառէ Բ. Դրան. մէլիքի փաշան իր զինուորներով տակաւին պաշարուած է Վահպետներու աշխրէթներէն և իր քով միայն 200 լիբաի չափ պոմար մը կը գտնուի բնակտնէ որ այս գումարը չի բաւեր ապստամբ պարագլուխները զինութափ ընելու:

Եէմէնի մէջ ուրիշ գժուարութիւն մ'ալ ծագած է («Թուրքիոյ և Անգլիոյ միջև») թուրքերը Լուպալէյի կոչուած հողաբաժնին տէրը ըլլալ կը շարունակեն, մինչդեռ այս հողաբաժինը Ատենեան երկրի Ս բաժիններէն մէկուն կը պատկանի սահմանագծին համաձայն: Եւ այս առթիւ հաւանական է որ նորանոր անհամաձայնութիւններու տեղի պիտի տրուի:

— Խրքա պարսկական վիճելի հողաբաժնին վրայ այժմ 20,000 թուրք զինուորներ կը գտնուին:

Թուրք սահմանագիծ յանձնախումբը Մուսուլ հասած է ու Վէշնէ պիտի մեկնի, վիճելի երկրի կեդրոնը: Այս երկիրը Մ. հանուրաէ գէպի Երարատ 2800 փարսախ երկայնութիւն և 120 փարսախ լայնութիւն ունի առ նուազն: Թուրք զինուորները ոչ միայն Վիշնէն գրաւած են, այլ Եադիլեանը և Բէրզէն ալ, որոնք անվիճելիօրէն պարսկ երկրի վրայ կը գտնուին, Թուրքիան բուն զինուորական գործունէութեամբ մը Պարսկաստանի դէմ կը սպառնայ: Պարսկական կառավարութիւնը պատասխանած է թէ՛ զէնքի դէմ զէնքով պատասխանելու պատրաստ է. քանի որ չը կրնար ուրիշ տեսակ ընել, բայց իր խաղաղասիրական զգացումները անգամ մը եւս ապացուցելու համար, զիմում կընէ Անգլիոյ և Ռուսիոյ, որոնք էրզրումեան պսլմանագրութեան մէջ այս հարցը որոշած են:

Պարսկ կառավարութիւնը նրմանապէս նկատել կուտայ թէ՛ շատ գժուարին պիտի ըլլայ ճիւղի աշխրէթները հնազանդեցնել որոնք մօտ 100,000 հոգի զինուորուած են, ինչպէս նաև կովկասցի հայերը որոնք սա նուազն 60,000 կը հաշուին:

Դրութիւնը կարծուածէն աւելի վտանգաւոր է:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

«Լուսինի Գորէսօնտէնց» լրագրիչը կիմանայ թէ՛ Վիթելի և Տուրնովոյի միջև բաւական լուրջ անհամաձայնութիւն մը ծագած է. Տուրնովոն ուստիկանութեան պիտոյցներուն համար բացառիկ վարկ մը կը պահանջէ, իսկ Վիթելի և լուսաւորութեան նախարար Մօլսոգոյը կը հակառակին: Տուրնովոն նախարարական խորհուրդի մէջ յայտարարած է, որ այն ազատութիւնը որ Վիթելի և Մօլսոթոյը կ'ուզեն ասու ազգիւն տալ, իմ պահանջած վարկէն շատ աւելի սուղի պիտի նստի» (°):

Նախարարական խորհուրդը Տուրնովոյի պահանջը մերժեց է. Էնչպիսի ուստիկանապետ Գոնտամրովը ամսոյս 25 ին սպաննուած է: Սպաննիչը ձերբակալուած է:

— «Գնիւզ Բոգէմքին» զրահաւորի ըմբոստ նաւաստիներու դատաւարութիւնը կը շարունակուի: Հիւանդանոցէն շատ մը հիւանդ նաւաստիներ պատգարկով դատարան կը բերուի:

«Օշագով» զրահաւորի նաւաստիներէն ալ շատ մը ամբաստանուածներ կան:

Ամբաստանուածներէն ոմանք իրենց կուրծքի վրայ պատուանշաններ կը կրեն, ի յիշատակ 2էմուլթոյի պատերազմին:

— Բեթերսպուրկեան երկրաչափներու միութեան ժողովը ամսոյս 27 ին ցրուած է, որովհետեւ անոնք ուստիկանութեան ներկայութիւնը մերժած են:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ռ.Ս.Տ.Ս. ՄԱ.ՂԱ.Ա.Ա.— Յ. Մուրտեան Կ. ի միջոցաւ ուղարկած 10 ֆր. ստացանք, Պարտքի մասին կը գրենք: Երգարանի համար դիմել Պ. Չարպահէլեանին:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«Հայկական» ընթերցարանի անցեալ Ընդհանուր ժողովը մեծամասնութիւն կազմած չըլլալուն, նորընտիր վարչութեան ընտրութիւնը, յետաձգուեցաւ յառաջիկայ փետրվ. 3 ուրբաթ երեկոյեան, որ տեղի պիտի ունենայ Ազգ. վարժարանի մէջ, ժամը ճիշդ 9 ին:

Այս անգամ ներկաները մեծամասնութիւն համարելով, ընտրութիւնը պիտի կատարուի:

Ուստի կը խնդրուի յարգոյ բաժանորդներէն որ բարեհաճին ներկայ գտնուի որոշեալ ժամուն:

Ի դիմաց Առժ. Մասնախմբի «Հայկական» ընթերցարանի 30 Յունիվ. 1906 Վ.Ա.Ն.Ա.